



Պատրիոտական ԱԲՐԱՋԻՎ ՍՈՒՍՊԵՆԶԻԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

և ԳՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱԼԿԱԼԻՍԿԱՆ ԱԲՐԱՋԻՎ ՍՈՒՍՊԵՆԶԻԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԿԻՐԱՌԱՎՈՂ ՆՈՐ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱ

Գ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Հայկական ՍՍՌ ԺՏԽ Ի ՄԻՒԱՅԻ ԳՅՈՒԴ գլխավոր ինժեներ

Կորողիոն և աբրազիվ հատկություններ չը ունեցող հեղուկներով և խառնուրդներով աշխատելու համար գործածվող պոմպերի կոնստրուկցիայի և նյութերի ընտրությունը դժվարություններ չի առաջացնում և լիովին բավարարում է պոմպերին ներկայացվող արդյունաբերական պահանջները։ Կորողիա առաջացնող խառնուրդներ և լուծույթներ վերամշելու դեպքում պոմպերը պատրաստվում են որոշակի նյութերից (ձենապակի, կերամիկա, պլաստմասսա, էմալ և այլն):

Բոլորովին այլ է դրությունը հեղուկի և աբրազիվ հատկություններ ունեցող պինդ ֆազայի խառնուրդների տեղափոխման ժամանակ։ Այդպիսի

սուսպենզիաների մատուցումը զգալիորեն բարդացնում է, երբ նրանք տեղափոխվում են բարձր ճնշման տակ։ Նման դեպքերում ալվազի կենտրոնախույս պոմպերի կիրառումը անհնարին է դառնում և դրա համար ընտրվում են մխոցային մեքենաներ։

Մասնավորապես կավահողային արդյունաբերության մեջ, որտեղ սուսպենզիաները (բոկսիտները, նեֆելինները) եկվում են ավտոկլավներում, անհրաժեշտություն է լինում պրոցեսները վարել բարձր ճնշումների տակ (20—40 մթն.)։

Դրա հետևանքով, երբ մխոցային պոմպերի հիդրավլիկ բլոկի դետալները շփվում են աբրազիվ պուպայի հետ, մաշվում են գլանը, մխոցակոթը և խցուկային հարմարանքը։ Շփվող դետալների մաշումը հաղթահարելու ուղիներ չեն գտնված, միջոցներ են

միայն ձեռք առնվում էրողիայի դանդաղեցման համար։ Դրա համար կիրառվում է թանկարժեք լեգիրված պողպատ, բարձրացվում է պինդ ֆազայի աղացվածքի դասը, որն առաջ է բերում ավելորդ էներգիայի ծախսում և աղունային ագրեգատների արտադրողականության նվազեցում՝ զանդաղլնիքաց մխոցային պոմպերի կիրառությամբ։ Վերջին հաշվով աշխատանքի ընթացքում շփվող դետալները, ծառայության խիստ կարճ ժամկետից հետո, փոխարինվում են նորերով։ Այդ հանգեցնում է հաճախակի նորոգումների, մեքենայի պարապուրդի, ազրեգատների մեծ ուղղերվի ստեղծմանը։

Աբրազիվ սուսպենզիաների վերամշման համար դիաֆրագմային պոմպերի կիրառումն անընդունելի է ազգեգատների փոքր արտադրողականության պատճառով, քանի որ դիաֆրագմայի համար ծանր պայմաններ են ստեղծվում։ Այսպիսով կարելի է ասել, որ գոյություն ունեցող մխոցային պոմպերը էական թերություններ ունեն և կատարելագործման կարիք են գտում։


Մեր առջև խնդիր է դրված՝ ստեղծել մի այնպիսի մեքենա, որտեղ աբրազիվ պուպայից շրջիկող մասերը մեկուսացնելու միջոցով բացառվեր նրանց մաշումը։

Խնդիրը լուծվել է շնորհիվ այն բանի, որ հեղուկը կամ լուծույթը կիրառվել է իրրև մեկուսիլ միջավայր, որի միջով ներծծման և մղման իմպուսները գլանից փոխանցվում էին կափույրի

տուփին, այսինքն՝ մեքենայի շփվող մասերն աշխատում էին հեղուկ միջավայրում:

Պոմպի ապակե մոդել

Գլանի մեկուսացման համար հեղուկային բուժեր (թափարզել) ստեղծելիս ձգտել են այն բանի, որ հեղուկը պուլպայի հետ շխառնվի: Ներծծման և մղման իմաստը ստուփի հաղորդելու գործառքայի ապակու մոդելի միջոցով (նկ. 1) ստուգվել է հետևյալ կերպ:



նկ. 1.

Ապակե հաղորդակից անոթը (1) միացվում էր մետաղե գլանի հետ (2), որտեղ շուտովիկային մեխանիզմի (4) օգնությամբ մխոցը (3) ուղղահայաց կերպով շարժվում է: Սակայն ինողովակը լցվում է հեղուկով (5) և աշտունակի կտրվածքի միջով ներմուծվում է պինդ ֆազան (աղացած ապար): Հեղուկի և ապարի տեսակա-

րար կշռոների տարբերության հետևանքով, պինդ մասնիկները ցած են ընկնում և հաղորդակից անօթների ներքելի մասում ստեղծում սուսպենզիայի վիճակ (6) հեղուկից բաժանված պարզութափ սահմանով: Եթե մխոցը դեպի վերև է շարժվում, հեղուկը բարձրանում է, սուսպենզիան իր հետ տանելով և սուսպենզիաների կոնաձև թասակ առաջացնելով: Մխոցի դեպի ներքեւ շարժվելու ժամանակ թասակն անհայտանում է և բաժանման սահմանը վերականգնվում:


Սոդեռով ստուգվել էր նաև հեղուկի և սուսպենզիայի խառնման ազդեցության երևույթը, նայած փորձի տևողությանը, մխոցի ընթացքի երկարությանը և շարժման հաճախականությանը: Բոլոր փորձարկումների ժամանակ հեղուկի և պուլպայի խառնման երևույթը չի դիտվել և բաժանման սահմանը միշտ էլ պահպանվել է:

Կատարած փորձերը մեզ համոզել են բուժերի կիրառման ճշտության մեջ՝ մխոցի գլանը աբրա-

զիվ պուլպայի հետ շփվելուց մեկուսացնելու համար:

Պուլպայի պոմպի սկզբունքային սխեմա

Պուլպայի և մեկուսացնող հեղուկի շխառնվելու ենթադրությունը ստուգելուց հետո, կառուցվել և մոնտաժվել է հորիզոնական տիպի պուլպայի պոմպ՝ 20—25 լ/մն. աշխատանքային ճնշմամբ և 5 մ³/ժամ արտադրողականությամբ (նկ. 2):




նկ. 2. Պուլպայի պոմպի ընդանուր տեսքը:

Յ-րդ նկարում մխոցը (1) շարժվում է գլանով (2), որ միացված է գլանաձև բաժանմիչ անօթում (4) գտնվող ծունկերի հետ (3): Կափուրի տուփը (5) կցաշուրթի միացման օգնությամբ ամրացվում է բաժանմիչ անօթների հետ: Կցաշուրթի (6) օգնությամբ գլանը մոնտաժվում է հաղորդակի իրանի վրա: Հաղորդակը համատեղված է պոմպի հիդրավլիկ մասի հետ և ամրացվում մետաղյա շրջանակի վրա: Բաժանմիչ անօթների մեջ ալկալիական պուլպայի հնարավոր ընկնումը ստուգելու համար անօթների վրա եռակցվել են նմուշընտրիներ (7), որոնց միջոցով հեղուկի նմուշները վերցվել են անալիզի համար:

«Կանազ» գործարանի կավաճողային փորձնական ցեխում, մի քանի ամիսների ընթացքում, պուլպայի պոմպի փորձարկումը ցույց է տվել, որ շրով լցված բաժանմիչ անօթները լիովին մեկու-

սացնում են գլանն ու միոցը աբրազիվ պուպաշից և պայմաններ ստեղծում ագրեգատի նորմալ աշխատանքի համար: Նույնիսկ ալկալին, որ հանդիսանում է ավտոկլավային հում պուպայի բաղադրիչ մասը, գործնականորեն շատ դանդաղ է ներթափանցում չըի մեջ և 24 ժամվա ընթացքում գլանի մեջ չի ընկնում. դա հնարավորություն է տալիս միոցի մանժետները կաշվից պատրաստելու:



նկ. 3.

1955 թվականից ավտոկլավային մարտկոցը կոմպլեկտավորված է «Սոնա» տիպի երկու պոմպերով, որոնք լիովին ապահովում են անընդհատ աշխատանքը: Պոմպի շփողը մասերի մաշվածը չի նկատվել, որովհետև նրանք աշխատել են մաքուր հեղուկում:

1956 թ. «Գիպրոալյումինի» Պետական նախագծային ինստիտուտում (Լենինգրադ) նախագծվել է պուպայի պոմպի արդյունաբերական նմուշը՝ Հայկ. ՄԱԾԻ Փողառնութիւնի Քիմիայի ինստիտուտի ավագ ինժեներ Մ. Ա. Սաֆարյանի և հողվածի հեղինակի մասնակցությամբ:

Բաժանից անօթերով պուպայի պոմպի արդյունաբերական ալիքի նկարագրությունը

Պուպայի պոմպը նախատեսված է ավտոկլավային մարտկոցը պուպայով սնելու համար: Հորիզոնական տիպի միոցային, երկգլան, կրկնակի գործողության պոմպը կազմված է երկու հիմնական՝ հաղորդակային և հիդրավլիկ մասից:

Հաղորդակային մասը համանման է ՈՒ8—3 պոմպին և կազմված է ձուլածո չուպունե հենցից, որի մեջ մոնտաժված է ձուլածո պտամնանիվով շուտովիկային լիսեր, երկու շարժաթիւ, երկու սողուկ և շնեկով ու փոքր ատամնանվակով լիսեր:

Փոխհաղորդիչ լիսերի դուրս ցցվող ծայրերը թույլ են տալիս ագրեգատը մոնտաժել փոկանիվի աշ և ձախ դասավորությամբ: Փոխհաղորդիչ և շուտովիկային լիսերները տեղադրված են հզոր գլանիկավոր առանցքակալների վրա, որոնց շառավղային խաղը մատչելի է կարգավորման համար: Շուտովիկները միմյանց նկատմամբ դասավորված են 90° անկյան տակ և լավագույն պայմաններ են ստեղծում պոմպի աշխատանքի համար: Ատամնավոր գույզն աշխատում է յուղային վաննայի մեջ: Սողուկները ավտոմատիկորեն յուղում են թանձր յուղով: Երկու շարժաթիւ միացված են սողանների հետ գլանածե մատներով:

Պոմպի հիդրավլիկ մասը բաղկացած է չրովկամ մի ուրիշ մաքուր հեղուկով լցված չորս բաժանիչ անոթներից: Աշ և ձախ կափուրի տուփերը ձուլված են պոմպատից և գամասեղներով միացված հենոցին:

Յուրաքանչյուր տուփում տեղադրված են երկու ներծծող և երկու մղիչ կափուրներ (կափուրների ընդհանուր քանակությունը 8 հատ է): Բաժանիչ անոթը եռակցված է և ունի գնդաձև հատակ: Բաժանիչ անոթների տեղադրման նըպատակն է պոմպի շփողը մասերը մեկուսացնել աբրազիվ պուպայից:

Գլանածե վառանները խտացված են սեպերով և պահպան են սեղմիչ բուլտերով: Միոցն ամրացվում է միոցակոթերի կոնաձև պոշամասի վրա, որոնց հիդրավլիկ խտացումը ստեղծվում է խցուկային հարմարանքով: Կափուրի տուփերի տակ մոնտաժված է խողովակներից կազմված ներծծող կոլեկտորը: Վերևում տուփի կափուրները միացված են մղիչ եռաբաշխիկների հետ: Պոմպն օժաված է նաև ֆիլտրով և օդային թասակով՝ օտարածին մարմիններ որսալու և հեղուկի բարախումը մեղմացնելու համար: Նորմայից դուրս ճնշման բարձրանալու դիպքում դորժում է գամասվոր ապահովիչը:

Պամպի բնուքագիրը	
Սկզբնական տվյալները	
Գլանի տրամագիծը	D=200 մմ
Մխոցի ընթացքը	s=450 մմ
Պտույտների թիվը մեկ րոպեում	n=32 պտ/րոպե
Մխոցակոթի տրամագիծը	d ₄ =65 մմ
Ճնշումը ներծծման գծում	z ₁ =10 մ
Ճնշումը մղման գծում	z ₂ =250 մ

Ներծծող խողովակի տրամագիծը $d_1=200$ մմ
Մղիչ խողովակի տրամագիծը $d_2=100$ մմ
Պոմպի արտադրողականությունը 32—142 մ³/ժամ
«Սոնա» պոմպի փորձնական մոդելների և նը-
մուշների նախագծման, մոնտաժման և յուրաց-
ման ժամանակ մեծ օգնություն ցույց տվին Հա-
յաստանի ժողովներունի Քիմիայի ինստիտուտի
ավագ ինժեներներ Ա. Պ. Պետրոսյանը և Մ. Ա.
Մաֆարյանը:

ԱՎՏՈՄԱՏԻ ԷԼԵԿՏՐԱՋՈՒՓԻՉ ԳՈՐԾԻԲՆԵՐԻ ԲՈՆԻՉՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ


Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

«Էլեկտրոսովագրիբոր» գործարանի ինժեներ

Էլեկտրաշափիչ գործիքների սլաքի ընթացքն ապահովվում է մեծ քանակությամբ բռնիշներով (նկ. 1), որոնք մինչև վերջերս պատրաստվում էին ձեռքով՝ քիչ արտադրողական հարմարանքների օգնությամբ: Այդ օպերացիայով մշտապես


որը հերթափոխի ընթացքում արտադրում է 10.000 հատ բռնիչ:

Այդ ավտոմատով բռնիշների պատրաստման տեխնոլոգիական հաջորդականությունը (նկ. 2) հետևյալն է:



նկ. 1.

գրաղվում էին մի քանի հոգի: «Էլեկտրոսովագրի-
բոր» գործարանի տեխնոլոգիական բաժնի կոնս-
տրուկտոր Ա. Միքայելյանի կողմից մշակվել
և արտադրության մեջ ներդրվել է մի ավտոմատ,



նկ. 2.